ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/33

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 06.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.03.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 01.02.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն, ինչի արդյունքում Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /01.02.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 112,878 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 112,878 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն թե հայտը ներկայացնելու օրը՝ 01.02.2019թ., այնպես էլ 02.02.2019թ., 03.02.2019թ. և այլն, հարկային պարտավորություն չի ունեցել:

Եվ պետք է նշել, որ Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտում նույնպես արտացոլված չէ որևէ հարկային պարտավորության վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն 01.02.2019թ. հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով հարկ

վճարողի անձնական հաշվի քարտի տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություններ չուներ:

Փաստացիորեն առկա է եղել ՀՀ ՊԵԿ-ի համակարգի կողմից թերացում, խափանում, քանզի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություն չուներ և չի ունեցել, վերոնշված հանգամանքը փաստում է նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված թիվ 275 տեղեկանքը, համաձայն որի «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /01.02.2019թ./ որևէ ժամկետանց պարտավորություններ չունի, ավելին, թիվ 275 տեղեկանքից պարզ է դառնում, որ Ընկերության միասնական հաշվում 01.02.2019թ. դրությամբ նույնիսկ առկա է գերավճար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գտնում ենք, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն ունենալու հիմքով հայտը մերժելը, այն դեպքում, երբ նման հարկային պարտավարությունը առկա չէ, հանգեցրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմանը և զրկել «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ին «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հետագա մասնակցությունից:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ նման պայմաններում «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու արդյունքում առաջին տեղ զբաղեցնող մասնակից են ճանաչվելու ավելի բարձր գին ներկայացրած մասնակիցներ, ինչի արդյունքում պետության բյուջեին կհասցվի վնաս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետի 2 ենթակետի համաձայն ընդունված «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո ընդունած բոլոր մյուս որոշումները»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Բողոքներ քննող անձի դիմել էր ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող

անձին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն Բողոքներ քննող անձին է ներկայացրել Բողոքի քննության համար անհրաժեշտ համապատասխան փաստթղթերը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից Բողոքներ քննող անձին չի տրամադրվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի կողմից 06.03.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.02.2019թ. թիվ 3 և 19.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցչի կողմից ներկայացված բանավոր դիրքորոշումը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար ճանապարհների հիմնանորոգման նախագծերի պատրաստման, ծախսերի՝ աշխատանքների իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Համաշիննախագիծ» ՓԲԸ–ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 12.02.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ է «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն Ընթացակարգի 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է համապատասխանաբար 820,000 ՀՀ դրամ և 700,000 ՀՀ դրամ կազմող գնային առաջարներ, և նույն չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

Այնուհետև, Հանձնաժողովը 19.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է նախատեսված շեմը գերազանցող՝ 112,878 ՀՀ դրամ հարկային պարտավորություններ, և նույն արձանագրությամբ որոշել է «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար:

Հանձնաժողովը 25.02.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին, իսկ 17-րդ չափաբաժնի մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ին:

26.02.2019թ. Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին հայտարարություն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանվել է անգործության 5 (հինգ) օրացույցային օր ժամկետ:

07.03.2019թ. Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնման ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարություն, որի համաձայն՝ Պատվիրատուն Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով պայմանագիր է կնքել «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգակին կենտրոն» ՓԲԸ-ի, իսկ 17-րդ չափաբաժնի մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքն ամբողջությամբ և Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն ինչպես հայտը ներկայացնելու օրվա՝ 01.02.2019թ. դրությամբ, այնպես էլ 02.02.2019թ., 03.02.2019թ.

և այլն, որևէ հարկային պարտավորություն չի ունեցել: Ընկերությունը նշեց, որ մրցութային հայտը ներկայացնելիս՝ վերջինս առաջնորդվել է իր հարկ վճարողի անձնական հաշվի քարտում առկա տեղեկատվությամբ, որտեղ նույնպես արտացոլված չէ որևէ հարկային պարտավորության վերաբերյալ որևէ տեղեկատվություն: Բողոքաբերը կարծիք հայտնեց, որ փաստացիորեն առկա է ՀՀ ՊԵԿ-ի համակարգի ենթադրյալ խափանման արդյունքում առաջացած անճշտություն, տեղեկատվական խոտան, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց որևէ պարտավորության վերաբերյալ տեղեկություն չուներ և չի ունեցել: Վերոնշված հանգամանքի մասին վկայում է նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված թիվ 275 տեղեկանքը, համաձայն որի «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 01.02.2019թ. դրությամբ որևէ ժամկետանց պարտավորություններ չունի, դեռ ավելին, Ընկերության միասնական հաշվում 01.02.2019թ. դրությամբ առկա է գերավճար: Հետևաբար, ըստ Բողոքաբերի, Ընկերության հայտը լիովին բավարարել է Ընթացակարգի Հրավերով սահմանված պահանջներին, ինչով պայմանավորված՝ Բողոքաբերը խնդրել է Բողոքներ քննող անձին պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 19.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ ընդունված՝ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, իսկ այնուհետև՝ դադարեցնել «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո ընդունած բոլոր մյուս որոշումները:

Վերոգրյալի կապակցությամբ Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված եզրակացության հիման վրա մասնակցի հայտը մերժելով՝ Հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան: Ինչ վերաբերում է «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո ընդունած մյուս որոշումներին, ապա Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Հանձնաժողովի կողմից ընդունված՝ Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգակին կենտրոն» ՓԲԸ-ին, և 17-րդ չափաբաժնի մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև նշված կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելու մասին որոշումները նույնպես ընդունվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 04.03.2019թ. «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 01.02.2019թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել, իսկ Ընկերության միասնական հաշվին առկա է եղել 121,558 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 11.03.2019թ. «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ին տրամադրած տեղեկանքը, ըստ որի՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն ընկերությունը 01.02.2019թ. դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք)՝

-3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

- 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

-10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

-10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի բողոքարկում պայմանագիր կնքելու

մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները՝ պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն Ընթացակարգի 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է համապատասխանաբար 820,000 ՀՀ դրամ և 700,000 ՀՀ դրամ գնային առաջարներ, և նույն չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

- Հանձնաժողովը 19.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է նախատեսված շեմը գերազանցող՝ 112,878 ՀՀ դրամ հարկային պարտավորություններ, և նույն արձանագրությամբ որոշել է «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար:

- Հանձնաժողովը 25.02.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին, իսկ 17-րդ չափաբաժնի մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ին:

- 26.02.2019թ. Պատվիրատուի կողմից www.gnumner.am կայքում հրապարակվել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու

մասին հայտարարություն: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանվել է անգործության 5 (հինգ) օրացույցային օր ժամկետ:

- 07.03.2019թ. Պատվիրատուն www.gnumner.am կայքում հրապարակել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնման ընթացակարգի կնքված պայմանագրի մասին հայտարարություն, որի համաձայն՝ Պատվիրատուն Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով պայմանագիր է կնքել «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգակին կենտրոն» ՓԲԸ-ի, իսկ 17-րդ չափաբաժնի մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ:

- Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերությունը 01.02.2019թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել, իսկ Ընկերության միասնական հաշվին առկա է եղել 121,558 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ն 01.02.2019թ. դրությամբ որևէ հարկային պարտավորություն չի ունեցել:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված՝ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո ընդունած բոլոր մյուս որոշումները դադարեցնելու պահանջին, ապա, հաշվի առնելով, որ «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո Հանձնաժողովի կողմից ի թիվս այլոց ընդունվել են նաև Ընթացակարգի 12-րդ չափաբաժնի մասով «Սեյսմակայուն շինարարության զարգացման ազգակին կենտրոն» ՓԲԸ-ի, իսկ 17-րդ չափաբաժնի մասով՝ «Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ պայմանագրեր կնքելու մասին համապատասխան որոշումներ, և կնքվել են պայմանագրեր, հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ վերը նշված պահանջը չի կարող բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 06.03.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՏԿՏՏՆ-ԳՀԱՇՁԲ-2019/1Ն» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 19.02.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետի 2 ենթակետի համաձայն «Համաշիննախագիծ» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ